6. Մագդաղա *(Մատթ. ԺԵ. 39)*. — *Տիբերիայէն 4 քմ. լերան ստորոտը որ Ուատի էլ Համամի կողմը Մէճտէլ անունով գիւղ մըն է, կը գտնուին պատերու մնացորդներ և երկու աշտարակ։ Էլ Մէճտէլը հին Մագդաղան՝ արաբերէն ձև մը որ կը համապատասխանէ եբրայեցերէն Միկտոլի որ կը նշանակէ աշտարակ կամ բերդ։*

Երբ Յիսուս Մագթաղա գնաց Փարիսեցիները գացին գտան և Անորմէ խնդրեցին երկինքի մէջ նշան մը՝ փորձելու համար զԱնիկա, բայց Յիսուս պատասխանեց. «Ազգ չար և շնացող նշան խնդրէ, և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէին» (Մատթ. ԺԶ. 1–5)։

Էլ–Մէճտէլը Մարիամ Մագդաղենացիին հայրենիքն է. անիկա այն բարեպաշտ կիներէն էր որ կը հետևէին Փրկչին առաքելական քարոզութեանց ընթացքին։ Այս Մարիամը՝ ըստ Ղուկասու, (Ը. 2) եօթն դևերէն ազատուած է, նաև այն մեղաւոր կինն է որուն անունը Ղուկաս փափկանկատութեամբ չի յայտներ, ա՛յն ապաշխարողը որ Փարիսեցիին տունը գնաց հաւանաբար Կափառնաում, աստուածային Փրկչին ոտքերը արցունքներով լուալու եւ օծելու զանոնք անուշահոտ իւղով (Ղուկ. Է. 37)։

Պետրոս եպս. Սեբաստացիին (Դ. դար) մէկ գրուածքին մէջ կը կարդացուի. «Տիբերիոյ մէջ Մագթաղայի եկեղեցին կը վկայէ թէ Փրկիչը Մարիամ Մագդաղենացիէն հանած է եօթն դևեր»։ 570ին Թէոդոս կը գրէ. «Տիբերիայէն ի Մագթաղա՝ ուր էր Մա-

---

թեամբ նուիրագործուած տեղերը (տե՛ս Փոկաս, Migne, P. G. 133, հատ. 937)։